

# Հայաստանի մրցունակությունը և տնտեսության ընթացիկ վիճակը

Ի-Վի Քոնսալթինգ
Սեպտեմբերի 27, 2017
Երևան


Մանուկ Հերգնյան
Սևակ Հովհաննիսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

## ՄՅՁ զեկույցի հիմնական եզրակացությունները համաշխարհային տնտեսության միտումների վերաբերյալ

- Տնտեսական ճգնաժամից անգամ 10 տարի անց ֆինանսական հատվածը դեռ մնում է խոցելի: Ռիսկերն այժմ ձևավորվում են զարգացող երկրներում:

- Ավելի շատ երկրներ այժմ ունեն նորարարության կարողություններ, սակայն դրանք պետք է ջանք գործադրեն նորարարության օգուտները հասարակության ավելի լայն շերտերի վրա տարածելու ուղղությամբ:

# Աշխարհի 15 ամենամրցունակ երկրները

| | ՀԱՄ 2017–18 Տեղ (137 երկրների մեջ) | ՀԱՄ 2016–17 Տեղ (138 երկրների մեջ) |
|---|---|---|
| Շվեյցարիա | 1 | 1 |
| ԱՄՆ | 2 | 3 |
| Սինգապուր | 3 | 2 |
| Նիդերլանդներ | 4 | 4 |
| Գերմանիա | 5 | 5 |
| Հոնկոնգ | 6 | 9 |
| Շվեդիա | 7 | 6 |
| Մեծ Բրիտանիա | 8 | 7 |
| Ճապոնիա | 9 | 8 |
| Ֆինլանդիա | 10 | 10 |
| Նորվեգիա | 11 | 11 |
| Դանիա | 12 | 12 |
| Նոր Զելանդիա | 13 | 13 |
| Կանադա | 14 | 15 |
| Տայվան | 15 | 14 |

# Հայաստանն իր մրցունակությամբ 73-րդն է 137 երկրների շարքում

| Երկիր | ՀԱՄ 2017-2018 Տեղ | Փոփ. |
|---|---|---|
| Բոտսվանա | 63 | ↑ |
| Կիպրոս | 64 | ↑ |
| Հորդանան | 65 | ↓ |
| Կոլումբիա | 66 | ↓ |
| Վրաստան | 67 | ↓ |
| Ռումինիա | 68 | ↓ |
| Իրան | 69 | ↑ |
| Ճամայկա | 70 | ↑ |
| Մարոկկո | 71 | ↓ |
| Պերու | 72 | ↓ |
| **Հայաստան** | **73** | **↑ 6** |
| Խորվաթիա | 74 | → |
| Ալբանիա | 75 | ↑ |
| Ուրուգվայ | 76 | ↓ |
| Չեռնոգորիա | 77 | ↑ |
| Սերբիա | 78 | ↑ |
| Տաջիկստան | 79 | ↓ |
| Բրազիլիա | 80 | ↑ |
| Ուկրաինա | 81 | ↑ |
| Բութան | 82 | ↑ |
| Տրինիդադ և Տոբագո | 83 | ↑ |

# Հայաստանի համեմատական դիրքը Եվրասիական տարածաշրջանի երկրների նկատմամբ

**ՓՈՒԼ 1**
Ռեսուրսների վրա հիմնված փուլ

**Անցում 1-2**

**ՓՈՒԼ 2**
Արդյունավետության վրա հիմնված փուլ

**Անցում 2-3**

**ՓՈՒԼ 3**
Նորարարությունների վրա հիմնված փուլ



# Մրցունակության դրական միտումը նախադրյալներ է ստեղծում կայուն տնտեսական աճի համար միջնաժամկետ հեռանկարում:




*Նշում. 2017 թվականի ՀՆԱ աճը կնխատեսված է առաջին կիսամյակի արդյունքների հիման վրա:

# Հայաստանի դիրքի համեմատությունը եվրասիական տարածաշրջանի երկրների և Ուկրաինայի հետ

| | ՀԱՄ 2017–18<br>Տեղ | ՀԱՄ 2016–17<br>Տեղ | Փոփոխություն |
|---|---|---|---|
| Ադրբեջան | 35 | 37 | ↑ 2 |
| Ռուսաստան | 38 | 43 | ↑ 5 |
| Ղազախստան | 57 | 53 | ↓ 4 |
| Վրաստան | 67 | 59 | ↓ 8 |
| **Հայաստան** | **73** | **79** | ↑ 6 |
| Տաջիկստան | 79 | 77 | ↓ 2 |
| Ուկրաինա | 81 | 85 | ↑ 4 |
| Մոլդովա | 89 | 100 | ↑ 11 |
| Ղրղզստան | 102 | 111 | ↑ 9 |

# Հայաստանի դիրքի փոփոխություններն ըստ հենասյուների

| ՀԱՄ հենասյուները | ՀԱՄ 2017-18 տեղ<br>137 երկրների շարքում | ՀԱՄ 2016-17 տեղ<br>138 երկրների շարքում | ՀԱՄ 2015-16 տեղ<br>140 երկրների շարքում | Փոփոխություն 2016-17-ի նկատմամբ |
|---|---|---|---|---|
| Ինստիտուտներ | 55 | 66 | 76 | ↑ 11 |
| Ենթակառուցվածքներ | 80 | 82 | 82 | ↑ 2 |
| Մակրոտնտեսական միջավայր | 101 | 88 | 72 | ↓ 13 |
| Առողջապահություն և տարրական կրթություն | 55 | 93 | 95 | ↑ 38 |
| Բարձրագույն կրթություն և վերապատրաստում | 69 | 71 | 72 | ↑ 2 |
| Ապրանքների շուկայի արդյունավետություն | 35 | 45 | 50 | ↑ 10 |
| Աշխատուժի շուկայի արդյունավետություն | 51 | 55 | 58 | ↑ 4 |
| Ֆինանսական շուկայի զարգացվածություն | 78 | 90 | 94 | ↑ 12 |
| Տեխնոլոգիական պատրաստվածություն | 77 | 71 | 75 | ↓ 6 |
| Շուկայի չափ | 115 | 120 | 116 | ↑ 5 |
| Գործարարության կատարելագործվածություն | 68 | 81 | 97 | ↑ 13 |
| Նորարարություն | 70 | 87 | 107 | ↑ 17 |

# Փոփոխության շարժիչները․Ինստիտուտներ

- Կառավարության կողմից հանրային կառավարման ոլորտում նախաձեռնությունները ձևավորել են դրական սպասումներ բիզնեսի շրջանում:
- Ցուցանիշների կեսից ավելին գրանցել են դրական փոփոխություն: Հատկանշական է դրական տեղաշարժը հանրային միջոցների կառավարման, որոշումների կայացման անաչառության, վստահության մակարդակի բնագավառներում:

# Փոփոխության շարժիչները․Մակրոտնտեսական միջավայր

- Հայաստանի դիրքի վատթարացման հիմնական պատճառը ձևավորված դեֆլյացիոն միջավայրն է:

- Հայաստանում 2016թ.  գրանցվել է 1,4% գնանկում (դեֆլյացիա), ինչը համարվում է, որ զսպում է տնտեսական աճը:

- Գնաճի նորմալ միջակայք է համարվում 0,5-3%-ը:

## Փոփոխության շարժիչները. Առողջապահություն և տարրական կրթություն

- Փոփոխության հիմնական պատճառն է տարրական կրթության ներգրավվածության ցուցանիշի բարելավումը, որը հետևանք է հաշվառման յուրահատկությունների:

## Փոփոխության շարժիչները․ Ապրանքային շուկաներ

- Մրցակցության ինտենսիվության աճ
- Սակագնային կարգավորման և մաքսազերծման ընթացակարգերում բարելավում
- Սակայն ոչ սակագնային կարգավորման վատթարացում
- Դրական միտումներ են արձանագրվել գնորդների կատարելագործվածության, ինչպես նաև ընկերությունների շուկայի պահանջներից բխող վարվելակերպի մասով:

# Փոփոխության շարժիչները․ Ֆինանսական շուկաներ

- Գրեթե բոլոր ցուցանիշներում առկա է բարելավում, սակայն ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը շարունակում է վատթարանալ

- Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող «Իրավունքների պաշտպանության համաթվի» էական բարելավում՝ շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքի գրանցման և անձնական տվյալների պաշտպանության համակարգի ներդրման արդյունքում

# ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԱԿՆԱՐԿ

# 2017 թ-ին դիտվել է տնտեսական ակտիվության աճ՝ հիմնականում պայմանավորվելով արտահանման շուկաների դրական միտումներով




*Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ԱՄՀ*

# 2017թ. տնտեսական դինամիզմն ապահովել են հանքարդյունաբերությունը, մշակող արդյունաբերությունը և առևտուրը:

**Ոլորտային ավելացված արժեքի փոփոխություններ**
2017թ. 1-ին և 2-րդ եռամսյակ




*Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ*

## 2017-ին պահպանվել է արտահանման աճի բարձր տեմպը: Գրանցվել է նաև ներմուծման կտրուկ աճ:




*Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ*

# Օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքի ցածր մակարդակը մտահոգիչ է

**Օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ ներհոսք**
միլիոն ԱՄՆ դոլար




*Աղբյուր՝ ՀՀ ԿԲ, Ի-Վի գնահատական*

## Տնտեսության հիմնական մարտահրավերները

- Աղքատության հաղթահարում և ներառական աճի ապահովում
- Նոր տնտեսական հնարավորությունների ստեղծում (նոր արտահանման շուկաներ, ներդրումների հոսք)
- Տեխնոլոգիական վերափոխում. 4-րդ արդյունաբերական հեղափոխության վտանգների չեզոքացում և հնարավորությունների առավելագույն օգտագործում